# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մեդպրո ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Ph-մետր | Ph-մետր | Լաբորատոր pH մետեր՝ նախատեսված ջրածնային ցուցիչի (pH) և օքսիդավերականգնման պոտենցիալի (ORP) չափումներ իրականացնելու համար: Սարքի pH չափման միջակայքը պետք է կազմի առնվազն -2.000-ից մինչև 20.000 pH, իսկ չափման ճշգրտությունը չպետք է գերազանցի ±0.005 pH շեղումը: Սարքավորումը պետք է ունենա 0.1, 0.01 կամ 0.001 pH ընտրովի լուծաչափ և պետք է ապահովի նվազագույնը 5 կալիբրացիոն կետով կարգաբերման հնարավորություն՝ առնվազն երկու տեսակի ստանդարտ բուֆերային լուծույթների (օրինակ՝ USA, NIST կամ դրանց համարժեք) ավտոմատ ճանաչմամբ: Օքսիդավերականգնման պոտենցիալի (ORP) չափման միջակայքը պետք է լինի ոչ պակաս, քան ±1999.9 մՎ, իսկ չափման ճշգրտությունը՝ առավելագույնը ±0.5 մՎ շեղումով: ORP-ի լուծաչափը պետք է լինի ընտրովի՝ 0.1 կամ 1 մՎ, և սարքը պարտադիր պետք է աջակցի առնվազն 1 ORP կալիբրացիոն կետի՝ բացառապես հարաբերական մՎ (Relative mV) ռեժիմում: Ջերմաստիճանի չափման միջակայքի ստորին սահմանը պետք է լինի ոչ ավել, քան 0°C (կամ 32°F), |

| | | | |
|---|---|---|---|
| | | | իսկ վերին սահմանը՝ ոչ պակաս, քան 100°C (կամ 212°F), ընդ որում՝ ջերմաստիճանի չափման ճշգրտության շեղումը չպետք է գերազանցի ±0.5°C-ը կամ ±0.9°F-ը: Սարքավորումը պետք է համալրված լինի համակարգչին և տպիչին միանալու համար նախատեսված սերիական ինտերֆեյսի USB պորտերով: Էլեկտրասնուցումը պետք է իրականացվի 220-240 Վ, 50/60 Հց հաճախականությամբ ցանցից: Մատակարարումը պարտադիր պետք է ներառի սարքավորման օգտագործման ձեռնարկը՝ հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով: Սարքավորման համար պետք է ներկայացվի ISO կամ դրան համարժեք որակի վավեր վկայական: Մատակարարը պարտավոր է ապահովել գործարանային երաշխիք՝ սարքի հանձնման-ընդունման պահից սկսած ոչ պակաս, քան 12 ամիս ժամկետով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Մեդպրո ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | |